

և Փրկչի կենսատու յարութիւնը: Գողգոթաներ տնպական են մարդկութեան համար, որը երբեմն սայթաքելով, երբեմն կանգնելով, երբեմն նոյն իսկ փոքր ինչ յետ վախճելով կրկին ու կրկին աշխատում է մտենալ ճշմարտութեան, բուժել անարգար կեանքի հասցրած վէրքերը, ստեղծել սիրոյ ու եղբայրութեան արքայութիւնը, և այդ ճանապարհին նա միշտ գտնում է Գողգոթա և դարձեալ Գողգոթա: Սակայն վհատուելու չէ, որովհետև ճշմարտութիւնն ու սէրը, արդարութիւնն ու եղբայրութիւնը մահ չունին և մենք այսօր շնորհաւորելով Աշարատի ընթերցողներին Փրկչի սուրբ յարութիւնը, կըմաղթենք ոյժ և կարողութիւն յանուն սիրոյ և եղբայրութեան, յանուն արդարութեան և մարդկութեան ցաւերը բուժելու՝ յառաջ և միշտ յառաջ դիմել և չը սարսափել երբէք Գողգոթայից, երբ նա հանդիպելու լինի, որովհետև սիրոյ և անձնազոհութեան մէջն է Գողգոթայի յաղթանակը: Ծնորհաւոր Զատիկ հայ եղբայր, երբէք մի մոռանար Գողգոթայի ճանապարհը. յանուն ճշմարտութեան և սիրոյ, յանուն եղբայրութեան և մարդ արարածների իրաւանց պաշտպանութեան քայլիւր դէպի նա, բարձրացիր նրա ժայռոտ դագաթը, գրկիր այնտեղ կանգնեցրած ծանր խաչը և թէկուզ ընկնես այնտեղ ուժասպառ, չի ուշանալ և քո Գողգոթայի լիակատար յաղթանակը:

Ն. Տ. Վ. Մ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Ազգիս Վեհախառ ծերունագարդ Հայրապետ օրհնում և շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք որդիական պարտաճանաչութեամբ շտապել էին շնորհաւորել Նորին


Սրբութեան ծննդեան ութսուն և հինգերորդ տարեդարձը  
 օրն անդրիլի 5-ին:

Բարձրագոյն հրամանով Ղարաբաղի թեմի առաջնորդ-  
 հաստատուեց Սինօղի անդամ գեր. Աշոտ վարդապետ  
 Շախեանը:

Օրեօլ քաղաքից վերադարձաւ և վանական կառա-  
 վարութեան անդամ նշանակուեց Խորէն վարդապետ  
 Մուրադբէկեանը:

Երևանի թեմի Գառնիբասարի գործակալ և Կոնսիստո-  
 րիայի նախանգամ նշանակուեց Լևոն արեղայ Փսերեանը:


Աբսորից ազատ արձակուեց Մողնու ս. Գէորգայ վա-  
 նահայր Աուկաս վարդապետը:



Մարտի 22-ին Ս. Էջմիածնում յանկարծամահ եղաւ  
 Երևանցի Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեանը  
 (Պաշտենին) 69 տարեկան հասակում:

Հանդուցեալը մեր աւագագոյն միաբաններից մէկն  
 էր և վարել էր բազմաթիւ պաշտօններ: Նա եղել էր  
 կառավարիչ Կիշինեի Էջմիածնապատպան կալուածոց, Փո-  
 խնորդ Գանձակի, գործակալ Էջմիածնի և Սուրմալուի  
 գաւառների, անդամ վանական կառավարութեան, վանա-  
 հայր Գոյանէի, Խոր վիրապի, Կարմիր և Թովմա առա-  
 քելոց վանուց Աղուլիսում: Ով որ դէթ միանգամ տեսել

և վայելել է նրա ընկերակցութիւնը, անշուշտ կը յաւիտադպիսի մի պարզ սրտի, խելացի, սրամիտ և խորիմաստ սրախօսի մահուան համար: Հանգուցեալը եթէ աշխարհական լինէր և ծառայէր գրականութեան, համարձակ կարող էր բռնել պատուաւոր մի տեղ մեր երգիծաբանների շարքին: Նրա մահը անխտիր բոլորի վրայ ծանր և ախուր տպաւորութիւն թողեց և նրա անունն ու յիշատակը հազիւ թէ մոռացուի իրեն ծանօթ անձանց շրջանից: Հանգուցեալը, ինչպէս վերէն յիշեցինք, պարզ և սակաւապետ մարդ էր: Նրա ամբողջ հարստութիւնը հասնում էր 47 բուրլու, որի դէմ համարեա նոյնքան էլ պարտք ունէր: Հանգիստ ոսկերացի մաքրասիրտ մարդ, դնա վաստակեալներին հանգստութիւն պարգևողի մօտ և ազօթիր նրա **Ս. Թոռի առաջ քո սիրած եկեղեցւոյ անդորրութեան և հաստատութեան համար:**



## Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

«Իււղանդ իոնի» մէջ կարդում ենք. —

Պուքրէշէն (Ռուսմանիա) արժանահաւատ եկեղեցական մը նամակ մ'ուղղելով Պատրիարքարան, կ'զանգատի ռուսմանահայոց ռուսմանական բարբերուն մէջ տիրող զեղծումներուն համար: Կըսէ թէ երբ Հայ եկեղեցւոյ օրինաց հակառակ պսակադրութիւն մը կնքել կ'ուզուի, ինչպէս երբ մօտաւոր ազգականի մը հետ ամուսնանալու համար կը դիմեն ու կը մերժուին, Ռուսմէն եկեղեցին դիմելով կ'պսակուին: Թէև Ռուսմէն եկեղեցին ալ չարտօնէր, երբ ներկայացող ամուսն հայ է, բայց վետարվարի 20-ին Ռուսմէն եկեղեցին պսակեր է, հակառակ օրէնքին: Հայ եկեղեցին չէր ընդունած, որովհետև ազգակցական մօտաւոր կապ մը գոյութիւն ունէր: Նոյնպէս Հայ եկեղեցին չի պսակեր այն ամուսն, որ քաղաքային ամուսնութեամբ կենակցելէ վերջ կ'ամուսնանան և այս պարագային ալ դիմում կ'ընեն Ռուսմէն եկեղեցին: